

ՇԻՐԱԿ—ՋԱՎԱԽՔԻ ՏՂԱԾԱՐԴՈՒ ԱՎԱՆԴՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱՋԸ

(XIX դարի վերջ—XX դարի սկիզբ)

Ս. Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Տարազի պատմաազգագրական ուսումնասիրությունը կարևոր դեր ունի ժողովրդի մշակույթի պատմության առանձին հարցադրումներ լուսարանելիս, քանզի ժողովրդական տարազը մշակվել է հարյուրամյակների ընթացքում՝ կրելով բնակչիմայական պայմանների, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի դրոշմը։ Կապված լինելով տվյալ էթնիկ ընդհանրության ծագման ու պատմական զարգացման հետ՝ ժողովրդական տարազը, որպես կարևոր մշակութային հատկանիշ, արտացոլում է տվյալ էթնոսի ազդային խնդրատիրությունը։

Տղամարդու ավանդության հագուստ-կապուստը, լինելով հայոց տարազային համալիրի կարևոր բաղկացուցիչներից, ազգագրական ուսումնասիրության ուրույն և ուշագրավ առարկա է։

Ստորև խնդիր է դրվում դիտարկել Շիրակի և Ջավախքի տղամարդկանց ավանդական տարազը, բացահայտել տղամարդու բարձրացրած տարազային համալիրի զարգացման հիմնական միտումները նոր էթնոմշակութային միջավայրում ու նաև բարձրացրած, արևելահայկական և համակովկասյան համարվող տարազաձևերի փոխառնակցության էական գծերը։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանը (XIX դարի վերջ—XX դարի սկիզբ) նշանակալից էր նրանով, որ առկա էին կենցաղամշակութային տարբեր ուղորտների աստիճանական համագործակցում ու եվրոպականացման միտումներ։

Դիտարկելով տղամարդու բարձրացրած տիպի տարազի ձևավորման ու փոխակերպման առանձին փուլերն ըստ կառուցվածքային միավորների և ընդհանուր կոպկասյան տարազաձևի վերլուծությունն ըստ ազգային, ընդհանուր կոպկասյան (այսրկովկասյան) ու եվրոպական մշակութային շերտերի, կարելի կլինի բացահայտել էթնիկ ավանդույթների պահպանվածության և կենցաղավարման մակարդակը, միջէթնիկ կապերի ու փոխառնությունների աստիճանը։

Ուսումնասիրության համար հիմնական աղբյուր են ծառայել Հայաստանի ազգագրության պետական թանգարանի (ՀԱՊԹ), Հայաստանի պատմության պետական թանգարանի (ՀՊՊԹ) և նախկին ԽՍՀՄ ժողովուրդների ազգագրության թանգարանի (Ս. Պետերբուրգ) հայկական տարազի հարուստ հավաքածուները, ինչպես նաև Վրաստանի պետական թանգարանի և Ախալցխայի թանգարանի համապատասխան նյութերը։ Կարևոր սկզբնաղբյուր են նաև հայ ազգագրության երախտավորների՝ գրառած դաշտային ազգագրական նյութերը, որոնք հնարավորին չափ համայնվել են 1984—1989 թթ. Գյումրիում, Ամասիայի, Աշոցքի, Անիի, Արթիկի և Ախուրյանի շրջաններում, ինչպես նաև Վրաստանի հանրապետության Ախալցխայի, Ասպինձայի, Ախալ-

1 Ե. Լալայան. Ջավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար)։—«Ազգագրական հանգես» (ԱՀ), գիրք Ա, Եռչի, 1895, էջ 227—231։ Մա. Լիսիցյան. Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ)։—ՀԳՊ-ի գրավոր նյութերի արխիվ, 1935—36 թթ. (108—117, 205—210), Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում գրառած, Վ. Բոջյան. ԴԱՆ, գրաված Բոգդանովկայի շրջանում, 1944 թ.։—ՀԳՊ գրավոր նյութերի արխիվ (131)։

քալաքի, Բոգդանովկայի ու Մալկայի հայկական բնակավայրերում մեր գրանցած դաշտային ազգաբնակչության նյութերով: Հարցի լուսաբանման համար արժեքավոր են նաև մի շարք հրապարակումներ²: Ազգագրական վերոհիշյալ նյութերին զուգահեռ օգտվել ենք նաև ՀԳԱ հնագիտության և ազգագրության³, պատմության ինստիտուտների⁴, ՀՊՊԹ արխիվային նյութերից⁵:

Բարձրալեզան տարազախումբը անցյալ դարասկզբին ընդգրկել է Կարնո ողջ աշխարհը: Փոփոխակները կենցաղավարել են նաև Տարոնի, Կարսի, Բաղրևանդի ու Համշենի դավառներում⁶: XIX դարի 30-ական թթ. կարնոհայերի համատարած տեղաշարժերի հետևանքով բարձրալեզան տարազախմբի սահմաններն ավելի են ընդլայնվել, տարածվելով Շիրակում, Ախալցխայի, Ախալքալաքի, Մալկայի, Բոգդանովկայի ու Ասպինձայի շրջաններում:

Մեր կողմից դիտարկվող տարազախմբի վերաբերյալ որոշ տեղեկություններ կան անցյալ դարի 30-ական թթ. սկսած, որոնք, սակայն, մակերեսային, կցկտուր բնույթ ունեն: Այսպես, Ն. Ֆլորովսկին Շիրակի մասին գրում է, որ «նախկին բնակիչները Փամբակ-Շորագյալի դիստանցիայում հազնվում էին վրացական, իսկ նորեկները՝ թուրքական ձևերով»⁷: Նման ընդհանրացումները երբեք էլ ճշգրիտ չեն արտացոլել իրականությունը:

Թեև Շիրակի և Ջավախքի տարազի հին շերտի վերաբերյալ որևէ քիչ թե շատ հանգամանակից նկարագրություն չկա, այնուհանդերձ, օգտագործելով բանահյուսական, մատենագրական, մանրանկարչական համապատասխան նյութերը, կիրորձենք ստորև բացահայտել դիտարկվող տարազային համալիրի մեջ դրսևորված տեղական առանձնահատկություններն ու համահայկական ընդհանրությունները:

Համաձայն ազգագրական նյութերի⁸, վերահիշյալ շրջաններում հայ տղամարդու տարազում անցյալ դարի վերջին և XX-ի սկզբին տարանջատվում են երկու համակարգ՝ տեղականը և կարնոհայերի «բարձրալեզան» կոչված համալիրը: Առաջինը կարելի է անվանել արխալուղ-չուխա (նկ. 1), երկրորդը՝ «եկաղուպպա (աբա)» համակարգեր՝ ըստ գլխավոր զգեստների անվանումների:

Հետաքրքիր է, որ կառուցվածքային առումով այդ երկու համակարգերն անխառն ու անհաղորդ չէին, երկուսում էլ ձևափոխման միտումներ էին դրսևորվում: Մի կողմից՝ բարձրալեզան տարատեսակն աստիճանաբար դուրս էր մղվում կենցաղավարումից, դրան զուգահեռ ավելի լայն տարածում էր ստանում տեղական, «կովկասյան» տարազաձև անվամբ հայտնի համալիրը:

² Տե՛ս օրինակ, Ղ. Ալիշան. Շիրակ. վեներտիկ—Ս. Ղազար, 1881, էջ 6, 143: Հ. Գեղամյան. Նամակ Ախալցխայից.—«Փորձ», 1876, էջ 420: Կ. Գ. Ղաֆաբյան. Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 117—118 և այլն:

³ Հ. Բ. Գյուլեցյան. Գյումրի (ազգագրական ակնարկ). գրի առնված կենդանական, 1908.—Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ (ՀԱԻ ԱՐԱ), (4)99, Պ. Հ. Նահապետյան. Արթիկի շրջանի ֆանիկ գյուղի պատմությունից և ազգագրությունից. գրի առնված Արթիկ, 1976.—ՀԱԻ ԱՐԱ, 2 (97, 2) 136: Ք. Գ. Գեղորգյան. Խոտորչի պատմաազգագրական ակնարկ. գրի առնված Երևան, 1976.—ՀԱԻ ԱՐԱ, 2/136: Ս. Ն. Սանասարյան. Կարնո աշխարհի ազգագրությունը. գրի առնված Երևան, 1965.—ՀԱԻ ԱՐԱ, 2/2, 3/44, 6/17:

⁴ Մ. Թամրազյան և Ն. Նիկողոսյան. Նյութեր Շիրակի վերաբերյալ.—Պատմության ինստիտուտի արխիվ, գործ 103 և 113—115:


⁵ Ստ. Լիսիցյան, Վ. Բոբոյան. ԴԱՆ.—ՀՊՊԹ-ի գրավոր նյութերի արխիվ:

⁶ Վ. Հ. Բոբոյան. Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ). Երևան, 1974, էջ 105:

⁷ Обзорение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении. Ч. 2, СПб., 1836, с. 306.

⁸ Ս. Հ. Պողոսյան. ԴԱՆ, 1984—1989 թթ., Շիրակ—Ջավախք, Ե. Լալայան. Նշվ. աշխ., էջ 227—231:

Մյուս կողմից, համալիրի որոշ տարրեր, օրինակ, կարճ, անթև զգեստը՝ ելակը (էլակ), ներմուծվել են «շուխա-արխալուղ» համալիրի մեջ: Դա ակնհայտ է անցյալ դարի վերջերին Ջավախքում տղամարդկանց տարազի վերաբերյալ Ն. Լալայանի գրառած նյութերից⁹, Փաստորեն Շիրակի ու Ջավախքի տղամարդկանց տարազի վերահիշյալ համալիրները յուրատիպ զարգացում էին ապրում, կրելով որոշակի փոփոխություններ:



Նկ. 1

Այժմ դիտարկենք խնդրո առարկա տարազային համալիրի վերափոխման ուղիները: Ըստ առկա նյութերի¹⁰, սկզբնական շրջանում, ինչպես և պետք էր սպասել, հայ վերաբնակները նոր էթնոմշակութային միջավայրում իրենց մեկուսի էին պահում, «շփվելով տեղաբնիկ հայերի, առավել ևս՝ այլ էթնիկ տարրերի հետ»: Նրանց մեջ բավականին ուժեղ էր «մենք» և «նրանք» հակադրության զգացողությունը: Որոշ հանգամանքների բերումով (եկվոր հայերի թվաքանակի դերակշռություն ու տեղաբաշխման համապարփակություն, սեփական, ավանդության մշակույթի խորը գիտակցում, մշակութային վառ հիշողություն ու կայուն ավանդապահություն) կարևորակցեց բավական ժամանակ անխաթար պահպանել իրենց մշակութային շատ արժեքներ, այդ թվում և տարազը, առանձնապես՝ կանանց: Պարենհայերը նույնիսկ հատուկ միջոցներ էին ձեռնարկում դրա համար. հատուկ կարգադրությամբ կանայք ու տղամարդիկ որոշակի (կարենհայությանը բնորոշ) հագուստ պետք է կրեին զանազան տոնածիսական արարողությունների ժամանակ¹¹: Վերաբնակ հայերի այսպիսի ռավանդապահությունը օրինաչափ երևույթ է՝ «իրենցը» պահպանելու ինքնապաշտպանական մեխանիզմի մի արտահայտություն: Կապված այն բանի հետ, որ տղամարդու տարազային համալիրը ճկուն ու բաց համակարգ էր նորամուծություններ և փոխառությունների առումով, հետադաժում այն համեմատաբար ավելի վաղ ենթարկվեց փոփոխությունների: Բացատրությունը մեկն է՝ տղամարդկանց ընտանեկան, հասարակական, տնտեսական գիրքը կանանց համեմատ շատ ավելի բարձր ու ազատ էր:

Պետք է նշել, որ կարենհայերը նոր մշակութային միջավայրում հարազատ մնացին իրենց սովորույթներին, ավելին՝ տեղացի հայերը աստիճանաբար ընդունեցին նրանց լեզուն, սովորույթները, զգեստները, տուն կա-

⁹ Ն. Լալայան. Նշվ. աշխ., էջ 23:

¹⁰ Վ. Ղաֆադարյան. Մի խառնաթուղթ Ախալցխայի համայնքի կենցաղի վերաբերյալ. — Երևանի Ներսիսի համալսարան, 1967, № 3, էջ 163—175:

¹¹ Նույն տեղում:

ռուցելու ձևերը¹² և ապա ընդօրինակեցին նյութական ու հոգևոր մշակույթի, ավանդական նիստ ու կացի բնորոշ գծերի կարինյան տարբերակները:

Աստիճանաբար տիցապետող դարձավ Կարնո հայ կանանց տարազը՝ շնորհիվ իր կատարելության, հարմարավետության, տպավորիչ ձևավորման ու ներդաշնակության: Կարծում ենք, որ այդ տարազաձևը բնակչության նոր միջավայրում տարածում ստացավ նաև կարնոհայերի մեծաքանակության շնորհիվ, ինչպես և կլիմայական պայմանների նմանության հետևանքով:

Ոչ պակաս կարևոր հանգամանք էր և այն, որ արհեստներն ու առևտուրը հիմնականում գտնվում էին վերաբնակների ձեռքին, որոնք էլ, հարադատ մնալով ավանդույթներին, համապատասխան ուղղվածություն էին հաղորդել դրանց: Նոր բնակության վայրերում տաքազի, դրա պատճաստման հետ կապված արհեստագործությունների վերածնունդն ու դրանց ավանդույթների պահպանումն էլ անմիջականորեն նպաստեցին հագուստի բարձրագույն ձևերի պահպանմանն ու կենցաղավարմանը նոր միջավայրում:

Ժամանակի ընթացքում աստիճանական անցում և համահարթեցում էր դիտվում նաև եկվոր տարրերի ներէթնիկ առանձին խմբերի միջև: Ս. Զելինսկին կարծես հաստատում է այս միտքը, գրելով. «Ներկայումս (XIX դարի 90-ական թթ.—Ս. Պ.) Թուրքիայից եկած բոլոր զաղթականները (ի նկատի ունի վանի, Մուշի, Բասենի հայերին—Ս. Պ.) միմյանցից չեն տարբերվում ո՛չ կենցաղային, ո՛չ այլ առանձնահատկությամբ»¹³:

Առկա ազգագրական դաշտային և թանգարանային նյութերը ֆույլ են տալիս ասելու, որ արևմտահայերի բարձրագույն առարաղաձեի արական համալիրը 1829—1830 թթ. արտագաղթից հետո որոշ ժամանակ պահպանվել է նոր բնակության վայրերում՝ տեղական տարազի համապատասխան համալիրի առկայության պայմաններում: Ժամանակի ընթացքում այն իր տեղը գիշել է «արևելահայկական» կոչվող տարազաձևին, ըստ որում անցումը երկրորդ համալիրին միանգամից ու կտրուկ չի եղել. հագուստի որոշ տարրեր, գլխի հարդարանքի մասեր շարունակել են չորժածվել արևելահայկական տարազաձևի մասերի հետ:

1870-ական թթ. Ախալցխայի տղամարդու քաղաքային հագուստի մասին Լ. Ջաղուրսկին գրել է. «...եկվորին զարմացնում է ասիական տարազի գերակշռությունը՝ քաղաքի նոր մասում ... ամեն քայլափոխի կհանդիպեք փաթթոցով և երկար արայով անցվորների, արայի տակից երևում են լայն գոտին և վարտիքը: Երիտասարդ սերունդը սկսում է եվրոպական հագուստ կրել»¹⁴:

Լ. Ջաղուրսկու վկայությամբ քաղաքային միջավայրում երիտասարդների տարիքային խումբ, ինչպես նաև հարուստ խավերի ու մտավորականության (առանձնապես արտասահմանում ուսանածների) շրջան մուտք էր գործել եվրոպական հագուստը, մինչդեռ գյուղական միջավայրում տիրապետող էր «կովկասյան» (որի մի տարբերակն էր «արևելահայկականը») կոչված տարազաձևը: Դա ակնհայտ է Շիրակի Դիրաքլար (ներկայումս՝ Ախուրյանի շրջ. գ. Կառնուտ) գյուղի միջին կարողության ընտանիքի բյուջեի նկարագրությունից¹⁵, որի համաձայն տղամարդու տարազը բաղկացած էր շապիկ-վարտիքից, արխալուղից, շալվարից, կտորե գոտուց, ոտքի փաթաթանից, բրդե գուլպաներից և շարուխից: Դա հենց կովկասյան տարազաձևն է: Հասկանալի է, որ քաղաքներին մերձակա գյուղեր ամեն նոր երևույթ համեմատաբար շուտ էր ներմուծվում: Ժամանակագրական կտրվածքով դիտարկե-

¹² Նույն տեղում, էջ 65:


¹³ С. П. Зелинский. Экономический быт государственных крестьян Шораяло-Александропольского уезда Эриванской губернии. Тифлис, 1893, с. 4:

¹⁴ Л. Загурский. Поездка в Ахалцихский уезд в 1872 г.—Записки императорского русского географического общества. кн. 8, Тифлис, 1873, с. 24.

¹⁵ С. П. Зелинский. Указ. соч., с. 75.

լով վերոհիշյալ տեղեկությունները, պարզ ու որոշակի է դառնում ուսումնասիրվող շրջանների տղամարդու տարալի զարգացման ուղու էվոլյուցիոն գիծը. որոշ ժամանակ դորժածվելուց հետո բարձրացյալն տարրերակը տեղը վիշել է «կոմկասյան» տարադաձերն, ըստ որում ավուդ սերնդի տղամարդկանց շրջանում նախկին համալիրը բավական ժամանակ պահպանվել է, մինչդեռ երիտասարդ տղամարդիկ հակված են եղել կլորոպական հանդերձների, Այս մասին Ն. Փոքրասյանը գրել է. «Նոր սերունդներուն մեջ միայն կտեսնվին եվրոպական ձևերու և սովորութեանց հետևորդներ»¹⁶,

Վերստին անդրադառնալով Լ. Ջադրսկու տեղեկությանը, նշեք, որ հիշված «երկար արան» և Ն. Ավագյանի հիշատակած «ջուպպան», որն ըստ վերջինիս «հարատեւել է բավական երկար ժամանակ»¹⁷, ըստ իր նույն տաղամասերն են. Կարծում ենք, որ վերոհիշյալ վերնազգեստի դորժածու-



նկ. 2

թյան ժամանակագրական բնութագրի մեջ որոշակի ճշտում պետք է մտցվի, քանի որ, ըստ Ե. Լալայանի գրառած նյութերի¹⁸, Ջավախքում տղամարդկանց տարադի այս մասը բացակայում էր: Մեր հարցումների ժամանակ ևս ասացողները երբեք չհիշատակեցին արական տարադի բաղկացուցիչ մասը կազմած այդ հանդերձի մասին: Ս. Անասարյանը Կարնո աշխարհի պատմաազգագրական ակնարկում տալով տղամարդկանց տարադի նկարագիրը, գործածում է միայն արա անվանումը¹⁹,

Կարինցի տղամարդու տարադի վերաբերյալ XIX դարի 70-ական թթ. թվագրվող մի տեղեկությունից²⁰ երևում է, որ բարձրացյալն տարադախմբի

16 Ն. Փոքրասյան. Աշխարհագրական. Ախալցխա.—«Հանդես ամսօրյա», Վիեննա, 1902, էջ 81:

17 Ն. Ավագյան. Հայկական ժողովրդական տարադը. XIX դ.—XX դ. սկիզբ. Երևան, 1983, էջ 80:

18 Ե. Լալայան. Ջավախք, էջ 230—231:

19 Ս. Անասարյան. Կարնո աշխարհի ազգագրությունը, էջ 80:

20 Л. Р. Рейтлингер. Медико-топографическое описание Эрзерумской области.—Медицинский сборник, издаваемый Кавказским медицинским обществом (МСКМО), т. 28, Тифлис, 1878, ч. 4, с. 55.

հայրենիքում ևս չէին կրում երկարափեջ վերնազգեստ արան, դրա փոխարեն նշվում է կարճ վերնազգեստ բաճկոն-«կուրտկան» (նկ. 2): Մալկայի տղամարդու հագուստի թվարկման մեջ ևս այն բացակայում է²¹: Կարծում ենք, որ երկար արա-ջուպայան բավական վաղ էր դուրս եկել գործածությունից: Ի դեպ, ասենք, որ Օ. Վ. էրիկսոնի կարծիքով տղամարդկանց բաճկոն-«կուրտկայով» համալիրը այնքան էլ կիրառական և հարմարավետ չէր, ուստի գուցե և կլիմայական պայմաններին հարմար չլինեին այն պատճառներից մեկն է, որ ստիպել է հրաժարվել ավանդույթային տարազաձևից և ընդունել բնակության նոր վայրում օգտագործվող «կուլկասյան» կոշիկի տիպը:

Պետք է նշել, որ Շիրակի և Ջավախքի պատմագագագրական շրջաններում տղամարդու տարազի համակարգում բարձրացյալն և տեղական համալիրներից բացի մի որոշ ժամանակ գործածվել է նաև վասպուրականյան տիպը, որը հավանաբար վասպուրականցիների փոքրաքանակ լինելու հետևանքով գործածվել է տարեց այրերի կողմից: Կարծում ենք, հաջորդ սերունդի կողմից այն կամ չի օգտագործվել, կամ էլ հազվադեպ է գործածվել:

Տղամարդու բարձրացյալն տարազի և վասպուրականի, Տուրուբերանի ու Աղձնիքի տարազաձևերի համեմատական դիտարկումից պարզ են դառնում նրանց առանձնահատկությունները. որպես տաք վերնազգեստ կարճ արայի փոխարեն կիրառվում էր երկարափեջ արան կամ ջուպայան, շապիկը ևս զանազանվում էր վասպուրականյան երկար ու ասեղնագործ թեզանիքներով տարբերակից: Փաստորեն ներէթնիկ խմբերի միջև իսկ տարբերություններ կային, ուստի և արևմտահայերի, տվյալ դեպքում կարնոհայերի տարազը չի կարելի դիտել որպես «թուրքական»: Դա բացառվում էր, որովհետև դեռ շատ վաղուց թուրքական սովթանների հրամանագրերով հայերին թույլ չէին տալիս հագնել թուրքականին նման զգեստ ու դեղին հողաթափ, կրել կարմիր, վառ գույնի գդակ և հանդերձ²²:

Թուրք տղամարդկանց տարազի համալիրի նկարագրությունից²³ երևում է, որ նրանց գլխի հարդարանքի մասը՝ չալմա-փաթթոցը, էթնոտարբերակիչ ցուցիչի դեր կարող է կատարել. իզուր չէ, որ ասվում է. «Թուրքը ամեն ինչ փոխում է, բայց ոչ գլխարկը»²⁴: Թեև հայ ունեոր խավերի մեջ օտարամոլությամբ որոշակի միտումներ են դրսևորվել, ինչ-ինչ նկատառումներով ներքաշ կրել են այս կտմ այն հագուստը, գլխի հարդարանքի մասը, ասենք, ֆես կոչված կարմիր մահուդե, թելափնջով գդակը²⁵, սակայն ժողովրդական տարազն անհամեմատ անխաթար է պահպանվել և հիմնականում զերծ մնացել օտար ազդեցությունից: Մշակութային փոխառության դեպքում իսկ ժողովուրդը հավատարիմ է մնացել իր ակունքներին, ավանդույթներին, գեղագիտական նախասիրություններին:

Բարձրացյալն տարազաձևի արական համակարգը, սեռատարբերային աստիճանակարգման մակարդակով նոր էթնոմշակութային աչալմաններում պահպանվել էր տարբեր կերպ: Եթե կանանց տարազն ընդլայնվում էր և նոր խավեր ընդգրկում, ապա տղամարդկանցը՝ ընդհակառակը, XIX դարի կեսերից աստիճանաբար դուրս էր գալիս կենցաղավարումից և դարավերջին արդեն հազվադեպ էր հանդիպում: Ավանդութային հնամենի համակարգը համեմատաբար երկար ու լավ պահպանվել էր գյուղական միջավայրում և

²¹ О. В. Эрикссон. Об условиях быта и санитарного состояния Цалкинских поселений.—МСКМО, т. 61, Тифлис, 1898, с. 214.

²² Տե՛ս Գ. Այվազովսկի. Պատմություն օսմանյան պետության. Վենետիկ, 1841, էջ 238—239:

²³ Народы Передней Азии. М., 1957, с. 348—349.

²⁴ «Տարազ», Թիֆլիս, 1911, № 56, էջ 77:

²⁵ В. П. Курылев. Одежда анатолийских турок.—В. кн.: Традиционная культура народов Передней и Средней Азии. Л., 1970; Сборник музея антропологии и этнографии, т. 26, с. 246.

բավական կայուն մնացել մինչև դարի վերջը՝ Ախալցխա, Ախալքալաք, ու Ալեքսանդրապոլ քաղաքներում, որտեղ տեղափոխվելու համայնականները նպաստող պայմաններ, այս համակարգին արագորեն դուրս էր եկել դործածությունից։ Պետք է նշել, որ դրանում ակնհայտորեն դրսևորվում էին սոցիալական, տարիքային աարևրությունները. եթե ավանդության համալիրը կայուն էր պահպանվել ավագ սերնդի տղամարդկանց շրջանում, առանձնապես միջին ու աղքատ խավերում, իսկ դրա որոշ տարրեր (նախ, շրջակա, ոտնաման) սուկավիդ դոյառում էին դեռահասների հագուստում, ապա միջին տարիքային խմբերում, առավելապես ունեործների մեջ, տարածվել էր «կոմկոսյան» կոշտած տարադասներ՝ էթնիկական առանձնահատկություններով հանդերձ, ըստ որում այդ համակարգին էր դասվում նաև արևելահայկական տարրերակրը։

Այժմ քննարկենք ուսումնասիրվող շրջանների տղամարդու տարազի մի քանի տարրերի ծագումնաբանական որոշ հարցեր։ Շիրակի տարազի վերաբերյալ կարևոր տվյալներ կան Հառիճի վանքի սլավոնաբանականներում, որոնց վրա երևում են տղամարդկանց հագուստի տարրեր՝ վարտիք, պարեգոտ, մեկի ղլխին, հավանաբար, թաղիքի ղլխարկ²⁶։ Ժողովրդական առաջի որոշ պատկերներ կան Անիի մանրանկարներում²⁷։ Դրանցում հանդիպող վարտիքը հին պատմություն ունի, վարտիքի կիրառության փաստը հայտնի է դեռ սուրարտական մշակույթից²⁸,

Հին հայկական տարազը հունա-հռոմեականից տարբերվում էր նրանով, որ հայկական համալիրում տեղա էր արեւելյան ժողովուրդներին բնորոշ երկար խարտիքը։ Ուստի կարևոր կռվան է այն տեսակետի դեմ, ըստ որի, իբր, վարտիքը քոչվորական, թյուրքական ծագում ունի։ Ուշադրություն դարձնենք՝ զղեստի անվանման վրա. ըստ Հր. Աճառյանի, վարտիքը պահպանվել է ծածկել» հոմանիշ ձևից է²⁹, Ուշագրավ է, որ այն հայերենում հոգնակի թվով է դործածվել, իսկ ինչպես հայտնի է վարտիքը և թևերը ծակվածապես առանձին զգեստներ են եղել և քույրերի ու կապիչների օգնությամբ կապվել են մարմնի համապատասխան մասերին, հետո առանձին մասերը իրար են կապել, արդյունքում մի նոր ամբողջական զգեստ՝ հին անվամբ³⁰, Դա յուրա-տեսակ բանալի է զղեստի ծագումնաբանական խնդիրների բացահայտման համար։

Վերնազգեստ-պարեգոտը, ըստ մատենագրական, բանահյուսական նյութերի, միջնադարյան Հայաստանում հայտնի է եղել կապա, ջուպյա անվանումներով³¹։

Ըստ Վ. Հուսոունու, կապուն համարվել է պարսկական գաբային և նշանակում է պարեգոտ, իսկ ազնվականներինը անվանվում էր պատմունճան³²։ Զուպյան արաբերենից փոխառված լայնաթիղան վերարկու է³³։

Ի դեպ, պսենք, որ բրդե զգեստների դործածության ավանդույթներն արմատներով ձգվում են հարյուրամյակների խորքը։ Շիրակի տարածքում, Արթիկի դամբարանադաշտում գտնվել է ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանը։

²⁶ Ա. Պատրիկ. Հայկական առաջ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը. Երևան, 1983, էջ 38—41։

²⁷ Նույն տեղում, էջ 120։

²⁸ Տե՛ս Ս. Ա. Եսայան, Ս. Գ. Հմայակյան. Ուրարտական զղեստը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 209։

²⁹ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 4, Երևան, 1982, էջ 325—326։

³⁰ Ю. Липперт. История культуры. СПб., 1907, с. 122—123.

³¹ Արա համ Կրետացի. Պատմություն. Երևան, 1973, էջ 161։ Ս. Արեղյան. Հին դուստնական ժողովրդական երգեր. Երևան, 1931, էջ 17, 123, 140։

³² Վ. Հասունի. Պատմություն հին հայ տարազին. Վենետիկ, 1923, էջ 200, 222, 227։

³³ Նույն տեղում, էջ 222, 227։

ջանի գործվածք (մ. թ. ա. XIII—XII դդ.)։ Հնագետ Տ. Ս. Խաչատրյանը Շիրակում բրդի մշակման մասին գրել է, որ Արթիկի, Հադիճի և Շիրակի դամբարանադաշտերում ու ալլ կետերում գտնվել են մեծ քանակությամբ իլիկների ոսկրե ղլխիկներ, որոնք բրդի մշակման հիմնական գործիքներից են։ «Արթիկի դամբարաններում հայտնագործված գործվածքները գլխավորապես վուշե և բրդե են»³⁴։ 1890 թ. Թիֆլիսում տեղի ունեցած տնայնագործների համագումարում Արթիկ գյուղի ներկայացուցիչ Բ. Ղարախանյանի գեկուցման մեջ նշված է, որ Շալե (բրդե) գործվածքներով հայտնի է Արթիկը, որի բնակիչները որպես արհեստավոր աչքի են ընկնում շրջակայքում, գյուղի մեծ մասը հագնում է շալի կտորներ։ Տղամարդիկ, առավելապես երիտասարդները, դնում են թաղիքե ղլխարկներ, կրում են շալե չուխա, շալե արխալուղ, շալե շավար ու պաճիճներ և բրդյն գուլպաներ։ Կարելի է ասել, որ տրեխից բացի նրանց հագուստը ամբողջովին բրդից է պատրաստվում»³⁵։ Անդրադառնալով բրդե վերնագգեստ-պարսեգոտին, նշենք, որ այս զգեստն էլ, հավանաբար, հիմք է ծառայել տղամարդու «կովկասյան» կոշիկած տաքագածին բաղկացուցիչ մասը կազմող չուխայի համար։ Ըստ Հր. Աճառյանի՝ չուխա նշանակում է ասվի, հայտնի է որպես կրոնավորի հագուստ և ունի ընդդրված մեծ արեալ՝ Արևելքից մինչև Բալկաններ»³⁶։ Իվանե Ջավախիշվիլին գտնում էր, որ այս բառը պարսկական ծագում ունի։ Վրացական աղբյուրներում հիշատակվում է IX դարից³⁷։ Ըստ Սաբա Օրբելիանու բառարանի՝ «չուխան» բրդե զգեստ էր և հնում այն «մենակյացի, միանձնուհու հագուստ էր»³⁸։

Հայկական չուխան առանձնանում էր իր փեշերի երկարությամբ, ինչը վկայում է նաև Վախուշտի Բաղրատիոնին (XVIII դար), գրելով, որ Տաշիրի և Աշոցքի հայ տղամարդիկ հագնում են երկար չուխա³⁹։ Փաստորեն, ուրարտական ժամանակներից եկող երկարափեշ զգեստ կրելու ավանդույթը հարատևել էր մինչև XVIII դար։

Չուխան ունի երկու տարբերակ. 1. կարվում էր սև տնայնագործական բրդե կտորից, վերնամասը ներքևամասին միանում էր կարերի վրա արված դարսերով կամ շարով, թևերն ուղիղ էին, լայն, թևքաբերանին ու կողքերին մեկական կարճ ճեղքվածքներով. 2. թևերը երկար և ձևավոր, կրծքալանջի երկու կողմում ունեի փամփշտակալներ։ Այս տարբերակը ընդունված էր քաղաքային միջավայրում (Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ) և գյուղերի ունեոր տղամարդկանց շրջանում։

Ըստ համեմատական վերլուծության՝ Շիրակի, Ջավախքի տարազի տղամարդկանց համալիրի կովկասյան տեսակն ուրույն տարազաձև էր և դրսևորում էր հետևյալ առանձնահատկությունները. տեղական արխալուղն ունի կանգուն օձիք. մինչև գոտկամաս կիպ ընդգրկում է իրանը և կոճկվում կեռ մերակներով (չափրաստ), զգեստը եզրագարդված է միաշար ոլորուն ոսկեթելով, որը հատուկ էր տղամարդու բարձրհասի տարազի համալիրին ու կանանց ջուլպայի հարդարման եղանակին. չուխան (նկ. 3) զանազանվում էր վրացական քարթլի-կախեթյան տարբերակից։ Ինչ վերաբերում է չուխայի ու շերքեզկայի տարբերությանը, տպա պետք է նշել, որ վերջինս ղոտկատե-

³⁴ Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 264; Он же. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, с. 19—20.

³⁵ Գ. Բ. Առաքելյան. Հայաստանում գորգի արտադրության պատմությունից. — «Բաների Հայաստանի արխիվներ», 1974, № 3, էջ 158.

³⁶ Հր. Աճառյան. Հայերեն արձատական բառարան. հ. 3, Երևան, 1977, էջ 63.

³⁷ Տե՛ս Լ. Կ. Сохадзе. Типы грузинской верхней одежды чохы, ареал распространения и термин. — Вестник Гос. музея Грузии, XXX, Тбилиси, 1975, с. 69.

³⁸ Նույն տեղում, էջ 69—70.

³⁹ Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. 3, Երևան, 1955, էջ 81.

դում ամրացվում էր կոճակներով ու մերակներով, մինչդեռ շուկան արձակ էին թողնում:

Շիրակի և Զավախքի թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց տարադային համալիրում հաճախ են հանդիպում օտարամուտ, հատկապես, թուրքական անվանումներ: Թուրքերենից փոխառյալ բառերի կիրառությունը կապված է կովկասի, Առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմական ճակատագրի հետ: Մենք հակված ենք կարծելու, որ փոխառված անվանումը բնավ չի ենթադրում, թե այս կամ այն անվանումը կրող երևույթը նույնպես պետք է փոխառված լինի և այս առումով Ն. Ն. Ստուգենցկայայի ենթադրությունը, որ «...հավանաբար ինքը առարկան ավելի հին է, քան դրա համար օգտագործվող տերմինը»⁴⁰ մեզ շատ ճիշտ է թվում:

Ուշադրավ է նաև համակովկասյան բնույթ ունեցող ու տարածման բավական լայն շրջանակներ ընդգրկող տաք վերնաղգեստ-թաղիքե թիկնաշորը (յափունջի), որն անփոխարինելի էր ճանապարհին: Թաղիքե թիկնոցի մասին տակավին հիշատակել է հույն պատմիչ ու զորավար Քսենոփոնն՝ «Անաբազդսում»⁴¹, Ֆ. Դյուբուա դե Մոնպերեն կովկասյան յափունջին անվանում էր թաղիքե թիկնոց և համեմատում տղամարդկանց հին ուսաշորի հետ⁴²:

Խոսելով շերքեզների թիկնաշորի մասին, հեղինակն իր միտքը շարունակել է այսպես. «Այդպիսի թիկնոց օգտագործում էին ինչպես կովկասյան մյուս ցեղերը, այնպես էլ հայերը»⁴³, Իսկապես, կովկասյան թիկնոցը նման է հին թիկնոց-քղամիդին, այն ևս գցվում էր ուսերին. տարբերությունն այն էր, որ երկրորդը պատրաստվում էր նուրբ, բարակ կտորից, իսկ կովկասյան թիկնոց-ալժենակաճը, որը տարածման բավական լայն շրջան է ընդգրկել և հայտնի է յափունջի փոխառված անվամբ, ամուր ու կոշտ թաղիքից էր:

Ինչպես թույլ են տալիս դատելու ազգագրական, բանահյուսական նյութերը, ավանդույթային տարտղի այնպիսի բաղկացուցիչ տարրեր, ինչպիսիք են գլխի հարդարանքը և ազանելիքը, համեմատաբար արագ են ենթարկվում ազդեցության: Հատկապես գրանցում դրսևորվել են համակովկասյան գծեր: Շիրակ—Զավախքի շրջատարածք տեղափոխվելուց հետո, տղամարդկանց բարձրահայրյան տիպի բարձր մորթե գլխարկները փոխարինվեցին տեղականով: Տեղական մորթե գլխարկ-փափախները կամ իրենք էին տանը պատրաստում կամ էլ պատվիրում էին գլխարկ կարողներին՝ Ախալցխա, Ախալքալաք ու Ալեքսանդրապոլ քաղաքներում:

Քանի որ հին հայերի մեջ կար միայն թաղիքե գդակ կրելու սովորույթը, ուստի և հասկանալի է, թե ինչու Ախալցխայի շրջանի որոշ գյուղերում սկսում են կիրառվել նաև վրացական թաղիքե գլխարկներ: Ոչ մի էթնիկ ընդհանրություն հենց այնպես, կուրորեն չի փոխառում այլազգի մշակույթի տարրերը, այլ ընդհակառակը, ընդունելով և յուրացնելով, դրանք հարմարեցնում է իր էթնիկ ավանդույթներին և ազգային կենցաղամշակութային համալիրի առանձնահատկություններին: Ուստի և պատահական չէ, որ վրաց երկարակող եզրերով գլխարկն ընդունելություն չգտավ: Մորթե փափախներից բացի, հատկապես Զավախքում, կրում էի՞ և ինքնատիպ գլխի հարդարանքի տարր՝ բաշլիկը, որը սովորաբար ուղեկցում էր թիկնոց-ալժենակաճին: Դրանք պահպանվեցին մինչև ներկա դարի 30-ական թթ.⁴⁴, Ի դեպ, գլխանոցների

40 Е. Н. Студенецкая. Общие черты в мужской одежде народов Северного Кавказа и их отражение в терминологии.—В кн.: Проблемы картографирования в языкознании и этнографии. Л., 1974, с. 263.

41 Քսենոփոն. Անաբազդա. Երևան, 1970, էջ 118:

42 Ф. Дюбуа де Монпере. Путешествие вокруг Кавказа. Сухуми, 1937, с. 43.


43 Նույն տեղում:

44 Ն. Ավագյան. Հայկական ժողովրդական տարազը, էջ 78:

վերնամասը որոշակի նմանություն ունի միջնադարյան մանրանկարներում հանդիպող աղամարդու գլխի հարդարանքին⁴⁵։

Սկսած XX դարի սկզբներից, վերոհիշյալ քաղաքներում, հատկապես արհեստավորական խավերում, տարածվեցին հովհարով գլխարկները (շապխա), որոնք, ըստ Հր. Աճառյանի, «եվրոպական գլխարկներ են»⁴⁶։

Ոտնամանը կաշվե տնայնագործ տրեխն էր (չարուխ), որը գործածվում էր գյուղական միջավայրում, բացի այդ հագնում էին քոշ, ցուղա, յամանի և այլ ոտնամաններ։ Քաղաքում տղամարդիկ կրում էին կաշվե սրաքիթ ոտնամաններ և բարձրաճիտ կոշիկներ։



նկ. 3

XX դարի սկզբներից քաղաքների ունևոր խավերում տղամարդիկ համեմատաբար արագ յուրացրեցին եվրոպական կենցաղամշակութային երևույթները՝ խթանելով նորությունների, այդ թվում և եվրոպական նորաձև հագուստի, տարածմանը։ Այդ համալիրը, որը կազմված էր տաբատից, ժիլետից և բաճկոնից, ըստ Լիպսի, «ծագում է արևմտիկական ժողովուրդների հագուստից»⁴⁷։ Սոցիալական խմբերում ավանդական հագուստը աստիճանաբար կորցրեց իր էթնիկ ինքնատիպ գծերը, որոնք վերանում էին և փոխվում քաղաքային, այսպես կոչված «եվրոպական» տիպի։ Վերջինս բնորոշվում էր ընդհանուր, համահարթեցված գծերով։

Այսպիսով, տղամարդկանց տարազային համալիրը, ավելի փոփոխուն

⁴⁵ Ա ա ա բ ի Վ ա տ ր ի կ. նշվ. աշխ., էջ 26, 42։

⁴⁶ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ.— էմինյան ազգագրական ժողովածու, հ. 3, Մ.—Ալեքսոլ, 1902, էջ 259։ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Եվրոպական փոխառյալ բառեր հայերենի մեջ. Վիեննա, 1951, էջ 126։

⁴⁷ Ю. Липс. Происхождение вещей. М., 1954, с. 74—75.

ու շարժուն լինելով, ավելի արագ է կորցրել իր էթնիկ գծերը, մշտապես արձագանքելով նորին, փոխառելով և հարմարեցնելով ազգային ավանդույթներին որոշ այլ էթնիկ մշակութային տարրեր: Տղամարդու տարազը բաց, բնականահամակարգ է միջէթնիկ կապերի ու փոխառությունների ասպարեզում, ինչը բայատրվում է տղամարդկանց հասարակական, տնտեսական ու ընտանեկան համեմատաբար ազատ դրույթամբ: Անցյալ դարի վերջերին Շիրակի և Զափախի պատմաազգագրական շրջանների հայ տղամարդկանց հագուստում ուշադրավ փոփոխություններ էին նկատվում. ավանդական բարձրհայելան տարազաձևը փոխարինվում էր արևելահայկական անվանվող տարազաձևերով, ըստ որում ավանդականի ձևափոխումը կատարվում էր տարրեր կերպ՝ ըստ սոցիալական, տարիքային խմբերին հատուկ առանձնահատկությունների: Այդ փոփոխությունները տարբեր էին նաև քաղաքային և գյուղական միջավայրերում: Մյուս կողմից՝ ղղացվում էին հագուստի եվրոպականացման ու համահարթեցման միտումներ. փնտրվ ավելի էր ուժեղանում եվրոպական մշակութի ազդեցությունը տեղական մշակութային երևույթների, այդ թվում և տարտղի վրա:

ТРАДИЦИОННЫЙ МУЖСКОЙ КОСТЮМ ШИРАКА—ДЖАВАХКА (Конец XIX—начало XX в.)

С. А. ПОГОСЯН

Резюме

Народный костюм армян представляет большой научный интерес как самостоятельный предмет этнографического исследования. Мужской костюм, по сравнению с женским, более изменчив, значительно раньше теряет свои этнические черты, быстро реагирует на новое, иногда заимствуя некоторые иконациональные элементы, которые обязательно приспосабливаются к национальным традициям. В конце XIX—начале XX в. в Ширакском и Джавахкском историко-этнографических районах бытовало два комплекса костюма: барцрайкский и кавказский. Барцрайкский комплекс имел большой ареал распространения в начале XIX в., охватывавший историко-этнографический район Барир Айк (Высокая Армения). После массового переселения каринских армян с 30-х годов прошлого века вышеуказанный костюм распространился в Шираке и Джавахке. В конце XIX в. барцрайкский комплекс постепенно выходил из употребления, а кавказский тип костюма охватывал новые слои разных возрастных групп мужчин. Кавказский костюмный комплекс в изучаемых районах имел свои локальные особенности. Мужская традиционная одежда уже с начала нынешнего века в городах, особенно среди зажиточных слоев, которые и являлись носителями городской элитарной культуры, быстро выходила из употребления. В других социальных группах традиционный костюм, теряя этнические самобытные черты и обезличиваясь, приближался к городскому так называемому «европейскому» типу, который характеризовался общими, унифицированными чертами.